

իրականացումը յեղափոխութեան մը միջոցով:

Երբ փարիզի փետրուարեան յեղափոխութեան արձագանք կու տան Հունդաբիոյ յեղափոխականները՝ Բեթլէֆի 13 մարտ 1848ին կը գրէ իր «Ազգային տաղը» «Nemzeti dal»: Յաջորդ օրը ուրիշներու հետ կը շարադրէ՝ ազգային պահանջներու 12 կէտերը: Երբ նոյն օրը խոնուած բազմութեան դիմաց իր ազգային տաղը կ'արտասանէ՝ խելայեղ խանդավառութիւնը դժուարաւ կը դադրի: Մամուլի ազատութեան, որ տասներկու պահանջի կէտերէն մին էր, առաջին երախայրիքը կ'ըլլայ՝ «Ազգային տաղ»ին տպագրութիւնը:

Սանդալառութեան եւ յաջողութեան այդ վայրկեաններուն, ինչպէս եղած է միշտ իր կեանքի ընթացքին, նոր յուսախարութիւններու շրջան մը կը յաջորդէ: Չափազանց արմատական յեղափոխութիւն մը երազած էր, որ նոյնիսկ իր յեղափոխական ընկերները շփոթութեան կը մատնէր, ուստի անոնք անգամ միացան իր հակառակորդներուն եւ երեսփոխան ըլլալու իր թեկնածութիւնը ձախողեցին: Այդ բոլորէն սկսեալ իր եւ կառավարութեան միջեւ բախում տեղի ունեցաւ, որ տեւեց մինչեւ մահը: «Առաքեալը» Az apostol իր ամէնէն երկար ոտանաւորը, կը ներկայացնէ իր քաղաքական տեսութիւնները: Անապարանքով գրուած ըլլալու յայտնի նշաններով հանդերձ՝ գրական իսկական գոհարներ կը պարունակէ ան:

Անարիւն յեղափոխութեան յաղթանակէն տարի մը անցած չէր, երբ հայրենիքը դարձեալ վտանգի մէջ էր, եւ աւելի քան երբեք: Բեթլէֆի հաւատարիմ իր նշանաբանին, թողած ընտանեկան երջանիկ բոյնը եւ մոռնալով ամէն հակադրութիւն կառավարութեան հետ, արդէն

Սեպտեմբեր ամիսէն ազգային բանակին մէջ է, իրր նոր զինուորագրներու կրթիչ սպայ: 1849 Յունուարին Թրանսիլուանիոյ բանակին Պէմ<sup>(3)</sup> ղեկցադն սպարապետին քով կը գտնենք տեղակալի աստիճանով: Յանկարծ բախում ունենալով զինուորական նախարարութեան հետ՝ կը լքէ բանակը: Կը բաւէ սակայն լուրը, թէ Ռուսերը՝ Աւստրիոյ նոր դաշնակիցները՝ Թրանսիլուանիա մտած են, եւ նա դարձեալ կը թռչի իր սիրած ղեկցադն Պէմին քով: Քանի մը օր վերջ հերոսաբար կ'ըլլայ փառքի դաշտին վրայ, մինչ անհաւասար կռիւի մը մէջ Պէմի հետ երեք հարիւր զինուորներով կը փորձէին կասեցնել երկու հազար ռուս տիգուրներու յառաջացումը:

Մեռած վայրկեանին Բեթլէֆի ճիշտ 26 տարեկան եւ 7 ամսու էր (1849 Յունիս 31):

Այսպէս մեռաւ այն բանաստեղծը, որու մասին խաղացի երեւելի Գարտուէչի քերթողը գրած է. «Աներեւութացաւ Յունաստանի մէկ գեղեցիկ չաստուածին պէս եւ ռադմադաշտի իր այս մահը կարծես իր դարմանալի անհատականութեան, եւ արտաքոյ կարգի ասպարէզին արուեստագիտական մէկ դիժն ըլլայ. այս խորհուրդը զինք մարդկային շրջանակէ վեր կը հանէ, որպէսզի յաւերժօրէն կենդանի, յաւերժօրէն երիտասարդ մնայ»:

#### Հ. ՅՈՒՍԻԿ ՊՈՒՇԼԻԿԵԱՆ

(Չարունակի)

(3) Յովսէփ Պէմ (1794-1850) ազգով լեհ էր, Փոքրիկ բանակով մը, քանի մը ամսուան ընթացքին, բոլոր Թրանսիլուանիան մաքրեց Աւստրիոյ կայսերական զօնը: Գերէն (1848 զեկտ. - 1849 փետր.): Սակայն հակառակ իր առասպելական քաջագործութիւններուն եւ ռազմական հնարագիտութեանը, Ռուս եւ Աւստրիական հսկայ բանակներուն դիմաց, արդէն 1849ի ընթացքին, ոչնչացան իր սակաւաթիւ վաշտերը: Մեռաւ Հալէպի մէջ:

ԿԻՒԼԿԵԱՆ ԱՇԽԱՐՀ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ


## ԲԵՐԴՈՒՍ

Բերդուս աւանը, Կիլիկիան պատմութեան մէջ քիչ անգամ յիշուած է, կրնայ ըսուիլ նոյնիսկ թէ ան Կիլիկիայէն դուրս մնացած հողային շերտ մըն է: Բայց Բերդուս իր որոշ տեղը ունեցած է Կիլիկիան իշխանապետութեան սկզբնական շրջաններուն, ըլլալով Փիլարտոս եւ Գող-Վասիլ հայ իշխաններուն կալուածը եւ նկատուած հայապատկան հող մը, որ աշխարհագրական զիրքովը մաս կը կազմէր Կիլիկիոյ:

Բերդուս լատիներէն բառ մըն է - Pertusus - որ կը նշանակէ անցք, ճեղք, կիրճ: Իրականին մէջ Բերդուս թէ՛ Սելճուգներու եւ թէ՛ Բիւզանդացիներու արշաւանքի ճամբուն վրայ հիւսիսէն դէպի հարաւ անցք կամ ճեղք մըն է. նոյնպէս անցք մըն էր հարաւի Արաբներուն համար, որոնք կ'ուզէին ասպատակել, Տաւրոսէն թափանցելով Բիւզանդացիներու երկիրը:

Բերդուս, ընդարձակ լեռնադաշտ մըն է. Տաւրոսի լեռնաշղթայի ծոցին մէջ զիրքաւորուած, ան շրջապատուած է ամէն կողմէ բարձր լեռներով: Հիւսիսէն Նուկրակի եւ Գօշ տաղի ձիւնապատ գագաթները, որոնք կ'երկարին մինչեւ Ալպուս լեռնի դաշտը, արեւելքէն Ընկուզիկի լեռը, հարաւէն Ախրո տաղի բարձունքները, իսկ արեւմուտքէն լեռնադաշտին ապառաժուտ կողերը, որոնք գահավէժ գառիթափով մը կը վերջանան Զիհուն գետին խոր ծորեւուն վրայ, սահմանակից ըլլալով Արեգունի:

Այս գեղեցկատեսիլ լեռնադաշտին հասնելու համար երկու ճամբայ միայն կայ. առաջինն է Մարաշի արեւելքէն դէպի Ախրո տաղի բարձունքները մագլցելու համար նեղ ձորամէջի մանուածապատ



Հեռում՝ Յիւսիսային կողմը կը տեսնուի Նուկրոնի ծիւմապատ լեռը:

ճամբան, որ երկու ժամ տեւող վերելք մըն է, իսկ երկրորդը այն ճամբան է որ արարական հին Հատաթ քաղաքէն Գանլը տաղի անցքով՝ Ընկուզիկ լեռներու ճեղքերէն դէպի Բերդուս կը տանի: Ռազմական տեսակէտով դիւրին էր այս երկու ճամբաներուն պաշտպանութիւնը, երբ նկատի առնուի անցքերու նեղիկ եւ քարքարուտ հանգամանքը:

Արդ, Բերդուս սկաւառակի ձեւով լեռնադաշտ մըն է Տաւրոսեան լեռներու մէջ, ծովու մակերեսէն հազար երեք հարիւր միզը բարձրութեան մը վրայ, ուր հոս ու հոն ցրուած կը գտնուին տասնըվեց թրքական փոքրիկ գիւղեր: Օղը, ջուրը եւ բնական ընդհանուր տեսարանը հիանալի են: Անտառները թէեւ փճացուած են դաշտային մասին մէջ, սակայն մերձակայ լեռներուն կողերը, մայրիկ, կաղամախի ծառերով ծածկուած են եւ ընտիր արօտաւորներ կը հայթայթեն Մարաշի եւ Հա-



լէպի շրջանի հօտերուն համար: Բնակչութեան զբաղումն է այգեմշակութիւնն և խաշնարածութիւնն: Բերդուսի խաղողին համը, հոտը ու տեսակը զմայլելի են. նոյնպէս կեռասը ու տանձը այնքան քաղցրահամ որ ոչ մէկ տեղ կարելի է գտնել: Այգեկութեւնը Սեպտեմբերին վերջերը ու Հոկտեմբերին մէջ կը կատարուի, և գիւղացին ձիւնին տակէն դուրս կը հանէ ոսկեղինիկ ողկոյզները, տոկուն ու սառնապաղ: Թիւրք բնակչութիւնը կայտառ, բարձրահասակ ու գեղեցկագէտ է. զրեթէ նոյն տիպարէն՝ ինչպէս որ էին իրենց նախկին արիւնակից եղբայրները՝ Ձէյթունցիները: Ձէյթունցիներն ու Բերդուսցիները, կին ու այր մարդ, միեւնոյն տարազը կը կրեն և օժտուած են նոյն քաջութեամբ կռուի ժամանակ, և նոյն անվահերութիւնը իրենց ապրելակերպին մէջ: Հագիւ երկուհարկէր տարուան հնութիւն մը ունի անոնց իսլամի կրօնը ընդունած ըլլալը: Դեռ շատ մը Բերդուսցիներ իրենց մեծ - հօրը անուններովը կը կոչուին - Արթին օղլու Հասան, Կարպիտ օղլու Մէմիշ, Թիւրիւս օղլու Էօքքէշ, եւն:

ԲԵՐԴՈՒՍԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐԸ. - Բերդուս, իր շրջակայ և մերձակայ յայտնի հայկական կեդրոններուն հետ ինչպէս Արեգնի, Շուգուր Խանթարիա - Ձէյթուն - Կոկիսոն, Եփեսոս, Հոնի, մինչեւ Ծամբնդաւ, մաս կը կազմէր Փիլարտոս հայուն տիրապետած հողերուն:

Երբ Գող-Վասիլ հաստատուեցաւ Քէսուն, Բերդուս Փիլարտոսի կողմէ նուէր տրուեցաւ Վասիլին, և այս ձեւով դարձաւ հայկական հող մը, իւրայատուկ իշխաններով և եպիսկոպոսական աթոռով: 1107 թուականին, պարսիկները ասպատակեցին Կիլիկիան, մանաւանդ Անաւարգան և անթիւ աւարներով, Մարաշի վրայով անցան Բերդուս, վերադառնալու համար իրենց հայրենիքը: Այդ պահուն Գող-Վասիլ «արծիւ» է և կամ «առիւծի կորիւն» է

մը պէս հասաւ անոնց վրայ Բերդուսի մէջ, պարտութեան մատնեց զանոնք, ասպատեց աւարներն ու գերիները և վերադարձուց Թորոս Ա. իշխանին:

Գող-Վասիլի վախճանումէն յետոյ Բերդուս տալիսապալի օրեր անցուց մերթ Բիւզանդացիներու և Խաչակիր ասպետներու և մերթ ալ հիւսիսի Սելճուկներու տիրապետութեան ենթարկուելով, մինչեւ որ Թորոս իշխանին կրտսեր եղբայրը Ստեփանէ զրաւեց Մարաշը ու Կոկիսոնը Յոյներու ձեռքէն, խլելով նաեւ Բերդուսը իկոնիոյ Սուլթանէն 1155 թուականին: Բայց Թորոս վերադարձուց Բերդուսը Սուլթանին և իր խիզար վարմունքին համար Ստեփանէն ալ տասը տարի բանտարկել տուաւ «Այլասեռ քար» բերդին մէջ: Այս թուականէն յետոյ, Մարաշի խաչակիր իշխաններէն ճօսլին ու Պաղտին կը տիրեն Բերդուսի քանի մը տարիներ, մինչեւ որ Լեւոն Մեծագործ վերջնականապէս կը տիրէ Բերդուսի:

Լեւոն Մեծի կողմէ Յովհաննէս Մեծաբարոյ կաթողիկոսին գահազրկութիւնը զրդապատճառ մը կը դառնայ որ Կաթողիկոսը դաւէ Լեւոնի դէմ, իկոնիոյ Սուլթանը հրաւիրելու՝ որ գայ և զրաւէ Բերդուսը:

Քէյ Խոսրով Սուլթանը 1208 թուականին, պատերազմով կը զրաւէ Բերդուսը, գերի վարելով Բերդատէր Լեւոն իշխանի որդին Գրիգոր իշխանը և թեմի Ստեփանոս եպիսկոպոսը:

Այս թուականէն վերջ թէեւ կը դադրի Բերդուս հայկական հող ըլլալէ, բայց պատմութեան ընթացքին կը յիշուի Մարաշի, Կոկիսոնի ու Բերդուսի, եթէ ոչ շարունակաբար, բայց ու այնպէս երկար տեսներ հայ իշխաններուն ձեռքը մնացած ըլլալը, Հեթում Ա. ի և Լեւոն Բ. ի ժամանակները:

Հեթում Բ. վերջնականապէս Եգիպտոսի Սուլթանին յանձնեց Հռոմիւլան, Մարաշը, Քեսունը ու Բերդուսը, ազա-

տելու համար Լուսաւորչի աջը, որ անցած էր Եգիպտոսիներուն ձեռքը, Հռոմիւլայի զրաւման տուն:

ԲԵՐԴՈՒՍԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. - Բերդուս կը գտնուի Մարաշի հիւսիս արեւելքը, չորս ժամուան հեռաւորութեան մը վրայ, Տարսուսեան լեռնաշղթային մէկ ընդարձակ սարալանջին վրայ, բարձրագագաթ լեռներով շրջապատուած, ընդարձակ այգիներով, ջրաբեր արօտավայրերով և լեռնազարդարուն: Բոլոր տեսակի վայրի ծաղիկներ անուշահոտ բուսութիւններով կը լեցնեն օդը այդ դախտանման հայրենի հողին վրայ:

Իրը հնութիւն, երկու բերդերու տեւրակներ կը տեսնուին, իսկ Քիլիսէճիք ըստած տեղը՝ վանքի մը փլատակները: Բերդերէն ամէնէն մեծը Հօմպուր գիւղին մօտ կը գտնուի, կարծես արհեստական բլուրի մը վրայ շինուած, թէեւ կողերը ժողովու են. բերդին արեւմտեան կողմը, բաւականին լայն տարածութեան մը վրայ, գետնափոր շէնքեր կան, ուր գեռ նշմարելի են մեծ թիւով սենեակներ: Տեղացիները Պագարեկի - Շուկայ - անունը կու տան այս փլատակներուն: Երկրորդ բերդը որ աւելի փոքր է, կը գտնուի Քիլիսէճիքէն կէս ժամ հեռաւորութեան մը վրայ, քար ու քանդեղած և գետնի մաս կարդակին իջած. հոտ տաշուած քարերու կոյտեր միայն տեսանելի են, ոչ պարիսպի հետքեր կան և ոչ ալ մուտքի դռներ կը տեսնուին. հաւանաբար պեղումները կընան նոր լոյսեր ու վիպութիւններ ընձեռել այդ փոքր բերդին ճարտարապետական կառուցուածքին մասին:

Քիլիսէճիք ըստած տեղին վրայ նոյնպէս կը գտնուին փլատակ շէնքերու տեւրակոյտեր, բաւականին ընդարձակ տաշուածութեան մը վրայ. հաւանական է որ այդ վայրը եղած ըլլայ եպիսկոպոսանիստ վանքը, իր շուրջ բոլորը՝ վանականներու

սենեակներով: Վանքը կառուցուած է տաշարակ գետնի մը վրայ, առանց պարիսպի. հոս ու հոն ջուրի զուլալ ակեր փլատակներու մէջէն կը հոսին աննպատակ, որոնք ժամանակին անպայման կ'ոռոգէին վանքին պարտէզները:

Բերդուսի արեւելեան սահմանը կը կազմէ Ընկուզիկ-Էնկիզէկ-Էնուր: Այս լեռան կողքէն կը բխի արաբ պատմագէտներու կողմէ ճշուրիտ կոչուած գետակը - Ագսու - որուն ալը քիւշիւք ձէրիտ կամ «Չաղլաղան ձէրիտի» անունով գիւղին մօտ է: Գետակին ջուրը ագուգաներով կը փոխադրուի մինչեւ Հին Հատաթ քաղաքը - արդի Մարայ կամ Կէօյիւք ըստած քրտական գիւղը:

Դեռ կը տեսնուին ագուգաներու մնացորդները, որոնք հովիտներու և լեռներու լանջերէն անցնելով երկու ժամ հեռաւորութեան վրայ կ'երկարին մինչեւ Ծով-Դղեակի, Ներսէս Շնորհալի բերդին մօտերը: Գրիգոր Պահլաւունի Կաթողիկոսը և իր եղբայրը Ներսէս Շնորհալի, իկոնիոյ Մասուտ Սուլթանին արշաւանքէն զերծ մնալու համար Հատաթի վրայով Ընկուզիկ լեռներու ընդմէջէն «յայնկոյս Տաւրոս» Բերդուս կ'անցնէին և անկէ ալ զիւրութեամբ Արեգնի, Կոկիսոն և հուսկ ուրեմն «Այլասեռ քար ամրականին» Թորոս Բ. ի բով:

Ահա ճամբայ մը, արշաւող թշնամիներէն բոլորովին անտեսանելի ու անհետապնդելի, որ կընար ծառայել Պահլաւունիներու, իբրեւ ապահով ուղի մը, Կիլիկիան իշխանութեանց մօտ ապաստան գտնելու, հայկական հողերու ապահովութիւնը իրենց սրտին մէջ դրոշմուած:

Բերդուսի արեւմուտքէն շատ յստակ կերպով կը տեսնուի Արեգնի. Ջիհուն գետի ձորն է որ այս երկու հայկական կեդրոնները իրարմէ կը զատէ: Վկայասէր և Բարսեղ կաթողիկոսները իրենց բնակութիւնը հաստատած էին և կամ յաճախ կ'այցելէին Արեգնի: Բայց չի յիշուիր թէ



անոնք այնքան մոտիկ Բերդուսին ալ այցելած էին: Հաւանական է որ Արեգնի վանքը, աւելի վայելուչ ու փառահեղ շէնք մը հղած ըլլար քան Բերդուսինը. Արեգնի փլատակ վանքի աւերակոյտները արդէն անոր խօսուած վկաներն են: Արեգնի մօտ, և կամ ճիշտ Արեգնի մէջն է նշանաւոր Մեծքար վանքը, ուր նահապետական մեր յանդուգն ու քաջ դիւանագէտ Մլեհ իշխանը:

Մարաշի մէջ, աւանդաբար կը պատմուի թէ Մլեհ իշխան իր մականովը, սաղաւարտովը և թուրովը թաղուած է

Մեծքարի մէջ, որ Բերդուսի սահմանակից է:

Մենք հակիրճ կերպով ներկայացուցինք Բերդուսի անցեալն ու ներկան և անոր կիլիկիան աշխարհին հետ ունեցած պատմական յարաբերութիւնները ու տեղադրական ծանօթութիւնները: Ապագային կը մնայ Բերդուսի մէջ պեղումներէն լոյս աշխարհ գալիք արձանագրութեանց և յիշատակարաններու ցուցմունքներու տակ, ունենալ աւելի ստույգ տեղեկութիւններ Բերդուս աւանի մասին:

Հալէպ

Տրքթ. Յ. Տէր ՂԱԶԱՐԵԱՆ

## ԱՆԴԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՐՑԵՐ

### ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ

(Շար. տես «Բազմ.» 1950, № 1-2 էջ 11-13)

#### ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

#### ՈՒՐ ԵՆ ՍՈՒՐԲԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐԸ

Այս հարցը ներկայացնելու միջոց, ամենեւին նպատակ չունինք աստղաբաշխական տեսակէտներով քննելու՝ թէ սուրբերու մահէն վերջ՝ անոնց հոգիները ո՞ր աստղին կամ մոլորակին մէջ կը հաւաքուին, երկրի կամ տիեզերքի ո՞ր խաւերուն մէջ կը մտնեն. նոյնիսկ երբ մեր դրութեան մէջ յաճախ երկինք բառը կը դործածենք, դայն բնաւ չենք առնել իր տիեզերաբանական իմաստով. միակ նպատակնիս է քննել՝ թէ սուրբերու հոգիները ի՞նչ վիճակի մէջ են մահէն վերջ, այսինքն՝ թէ արդեօք հասած են երանական աստուածութեան,

կը տեսնենք «դէմ յանդիման» Ամենասուրբ Երրորդութիւնը՝ երկնաւոր Հօր փառքերու լոյսին մէջ, եւ թէ արդեօք վարձատրուած ու պսակուած են իրենց կրած նեղութիւններուն եւ չարչարանքներուն փոխարէն. մէկ խօսքով՝ արդեօք երկինքն են:

Ահա ուրեմն թէ ի՞նչ կը հասկնանք երկինք եւ արքայութիւն՝ բառերով:

Նմանապէս երբ կայանի մասին խօսք ըլլայ, ամենեւին չենք կարծեր սահմաններով չափուած ու ձեւուած տեղ մը որոշել տիեզերքի մէջ. այդ կը թողունք աւելի հետաքրքիրներուն: Աստուածաբանական տեսակէտով՝ կը հասկնանք նոյնպէս հոգիներու վիճակ մը, ուր հոգիները չունին երանական աստուածութիւն, չեն վարձատրուած ու չեն պսակուած,

<sup>1</sup> «Արքայութիւն» դրարարի մէջ թաղաւորութիւն կը նշանակէ. այդ իմաստով ալ յաճախ դործածուած է Ս. Գրքի մէջ: Նոր կառկարանի մէջ «արքայութիւն Աստուծոյ» կամ «երկինք» կը նշանակէ Աստուծոյ երկնաւոր թաղաւորութիւնը, որ սկիզբ կ'առնէ այս երկրի վրայ (Ս. Եկեղե-

ցիով) ու պիտի աւարտի երկինքի մէջ Աստուծոյ երանաւէտ տեսութեամբ (բուն արքայութիւն): Այս ամէնէն վերջին իմաստով դործածուած է Ս. Հայրերու քով եւ դարձած է աստուածաբանական որոշ ու սեղմ եզր:

որովհետեւ տակաւին չեն դատուած. սակայն հոն անսխալ յոյսով կը սպասեն (ըստ ենթադրութեան) Քրիստոսի վերջին դալստեան, տիեզերական դատաստանին եւ իրենց ակնկալած երկնային անսպառ վայելքներուն:

Ահա ուրեմն թէ ի՞նչ կը հասկնանք հոգիներու կայան ըսելով. բայց թէ ո՞ւր է այդ կայանը՝ չենք գիտեր որոշակի: Նոյնը կրնանք ըսել նաեւ դժոխքի եւ քաղաքացի մասին, իրենց պատշաճ յատկացումներով:

Իսկ «սուրբ» ի տիպոսը կու տանք անոնց որ քրիստոնէական կեանքի գերազանց ապրումով փայլած են ատենօք աշխարհիս վրայ՝ մինչեւ իրենց մահը: Սուրբերու շարքին են մարտիրոսները, որոնք հաւատքի համար կեանքներն զոհած են. խոստովանողները, որոնք կրօնքի համար չարչարուած ու տանջուած են եւ սպա բարի մահով վախճանած. եւ հուսկ բոլոր անոնք (կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, ճգնաւոր, կուսան, աշխարհիկ) որ քրիստոնէական առաքինութիւններու զիւցաղնային աստիճանին հասած են, եւ Ս. Եկեղեցիէն ու ժողովուրդէն իրեն «սուրբ» ճանչցուած, ծիսական պաշտամունքի արարողութիւններով յարգուած, յաճախ նաեւ հրաշագործ համբաւով փառաւորուած:

Արդ կը հարցնենք թէ ո՞ւր են ներկայիս Հին ու Նոր Ուխտի սուրբերուն հոգիները. երկինք, արքայութիւն՝ թէ կայան, երանական փառք՝ մէջ՝ թէ յոռաւիր սպասման վիճակի մէջ:

Գրչ. Փառէն Եպիսկոպոսի համաձայն՝ անոնք բուն երկինքի արքայութեան մէջ չեն, այլ՝ կայանի մէջ, եւ իբր թէ՛ ա՛յդ է Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ վարդապետութիւնը<sup>2</sup>:

Տեսնենք ու քննենք հարազատ աղբիւրները:

#### Ա. - ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Գրչ. Փ. Ե. իր երկար յօդուածաշարքին վերջաւորութեան՝ «Բարեխօսութիւն

սրբոց» վերնագրով գլուխ մըն ալ բացած էր, ու այդ առիթով՝ սուրբերու բարեխօսութեան, անոնց տօնական յիշատակութիւններուն, շարականներու եւ ժամագրքի աղօթքներու հարազատ իմաստներու մասին տեղեկութիւններ տուած էր<sup>3</sup>: Այնտեղ յիշատակած էր նաեւ շարականներէն քաղուած 30 հատուածներ, «Իբրեւ նմոշ, ցոյց տալու համար թէ ո՞րքան պարզ եւ աւետարանաշունչ են անոնք<sup>4</sup>». աստուծոյ սկսինք մենք ալ, ներածական մէկ քանի դիտողութիւններով:

Արդարեւ այդ համառօտ ծաղկաքաղին մէջ յիշուած են տուներ որոնց իմաստն է՝ թէ սուրբերը արդէն արքայութեան մէջ են ներկայիս, եւ այնտեղէն կը բարեխօսեն. ահաւասիկ.

«Արդ, եկայք հաւատացեալք, կատարեսցուք զյիշատակ սոցա. քանզի սոքա են մեզ բարեխօս յարքայութեան Աստուծոյ» (Մրտ. զկ. դ. Տրց.):

«Առաքեալ եւ նախավկայ Քրիստոսի, Սուրբ Ստեփանոս. որ զբարկոծումն յանձն առեր եւ յանմահից բնակարանս վերափոխեցար» (Ստեփ. Օրհ.):

«Նախասարկաւազ եւ առաջին մարտիրոս, որ ի Քրիստոսէ պսակեցար, եւ յերկնանմ առագաստին պայծառացեալ բերկրեցար, աղաչեա՛ զԱստուած...» (Անդ. Մկ.):

«Որք համբարձայք ի կանառն սերովբէից եւ ի դասս քերովբէից, բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց» (Ղեւոնդ. Հմբ.):

Գրչ. Փ. Ե. ուղած է շեշտել եւ երեւան հանել սուրբերու բարեխօսութեան վարդապետութիւնը, սակայն այդ՝ այնքան սերտ աղերս ունի անոնց երկինքի արքայութեան մէջ գտնուելուն հետ, որ մէկը ցուցադրելու ատեն՝ միւսն ալ անուղղակի մատնանշած է, զոր մենք ընդդէմէնք:

Բայց եւ այնպէս, անդամ մըն ալ (անշուշտ նպատակաւորմար չտեսնելով) կախման կէտեր դործած է եւ այսպէս տըպած.

«... վասն մեր առ Տէր բարեխօսեալ» (Սանդուխտ. Մկ. 3 տուն):

<sup>3</sup> Հասկ, 1947. № 4, էջ 86-89:

<sup>4</sup> Անդ. էջ 87:

<sup>2</sup> Հմմտ. մեր ամփոփոյթը. «Բազմ.» 1949, № 3-4, էջ 77. № 5-6, էջ 99: